

«Ի նպաստ տէրութեան յառաջագիմութեանը՝ վաճառականութիւնը յառաջացուցինք։ Երկրին՝ անօգուտ ծառաներ չեղանք, ու այսօր ալ չենք։ Երբ պէտք եղաւ որ երկիրը զինուոր տայ, մեր աղքատ հասարակութիւնը 28 նորընտրեալներ (tiro) տուաւ։ Մեր հարկաւոր պարէնն ու բմպելիքն իրական գրամով կը գնենք։ Շատ տեղեր շարունակ տուրք կը վճարենք։ Փոխարինութիւն միշտ կը հատուցանենք։ Գուար եւ ուրիշ անասուններ, մեղրամոմ, դառնի մորթ, եւ ուրիշ այլեւայլ տեսակ Գրանսիլուանիայի ապրանք ու նիւթ, ըստ մեծի մասին օտար երկիրներ կը տանինք կը սփռենք։ Եթէ Գրանսիլուանիայի եւ Հունգարիայի երեսներէն երբեք միայն, զոր այս երկրին մէջ կը թողունք — ի նկատի առնենք — մեծ գումարի կը բարձրանայ։

«Մենք՝ այս երկրին օրինացը դէմ, երբեք ըսած ու պահանջած չենք, թէ, իրրեւ ընդունուած ազգ համարուինք ու ճանչցուինք։ Այնպիսի ազատութիւն ու առանձնանորհուրդութիւններ ուզած չենք, որուն համեմատ՝ հասարակաց ծանրաբեռնութիւններէն ազատ ըլլանք. — եւ կամ որ ուրիշ ազգայնութիւններուն կոնակէն ապրող պարապ մարդիկ ըլլանք։ Եթէ որ զինուորաց բնակութիւն տալէն, իրրեւ վաճառական մարդիկ (որոնք՝ մեր տներն ու աւելի թանկագին բաները, սովոր ենք մեզմէ հեռու թողուլ), գթածաբար ազատ (immunis) հրատարակուցանք, ասոր օրինակներ պակաս չեն։ Շատ երկիրներ քաղցինք, բայց տեղ մը չգտանք, որ վաճառականք, զինուորաց բնակութեան տեղ պէտք է որ տան։ Իշխանապետին գթութենէն կախում ունի, որ այս բաներուս մէջ ալ ազատութիւն տայ, կամ չտայ, որովհետեւ իշխանութիւն ունի, մեր ընկերութեան գթածաբար արտօնութիւն շնորհելու։ — Ասկէ առանց վերջին աստիճանի մեծ վնասու ու մանաւանդ մեծապատիւ կառավարութեան հաւանութեանը չենք կրնար հրաժարիլ։ Ուստի խոնարհաբար կը խնդրենք. մեծապատիւ արքունական կառավարութենէն, որ ասանկ մեծ վտանգի մէջ, զմեզ՝ իր գթած պաշտպանութեանը տակ առնելու բարեհաճի։

«Խոնարհաբար սպասելով մեծապատիւ կառավարութեան գթութեան՝ կը մնանք, խոնարհ ծառայք,

Արքունիոս վիզուան
Յովնանէս Յովնանէս։»

Ազատ թագաւորական քաղաքաց երեսփոխաններուն, շատ տեղ յիշած աղերսագիրը

— զոր գրած են ազգայինք՝ կայսեր, զինուորաց բնակութեան տեղ չտալու եւ նախամոլքի ծառայութենէն ազատելու նկատմամբ — չունինք։ Բայց անոր պատասխանը կեցած է։ Ասիկայ՝ չէ թէ ազգայնոց, այլ Գրանսիլուանիոյ վերին կառավարութեան վերատեսչութեան խորհրդին գացած է, այն իմաստով՝ որ վերը յիշուած է։ Իսկ երկու քաղաքներուն՝ արքունական դիւանատէն յաջորդ պատասխանն եկած է։

«Նկատմամբ խնդրած աղերսանքին, որ ազատութիւն գտնէք, զինուորաց տեղ տալու եւ նախամոլքի ծառայութենէն, հրաման գացած է Գրանսիլուանիոյ թագաւորական վերին կառավարութեան, որ ասոր վրայօք կայսեր առաջարկութիւն մ'ընէ. — ու խնդիրը՝ մինչեւ ցարժարագոյն որոշուի, առկախեալ վիճակի մէջ մնայ։

«Գրանսիլուանիոյ արքունական խորհրդին դիւանատէն։ Ղիննա 1792 յուլիս 22.

Լատիվլաուս Չէտօ, յ. ձ.
արքունի քարտուղար։»

(Հարսնալէն։)

ՅՈՎՏ. ԱՆԾԻ



Հ Ն Ա Ռ Օ Ս Ա Կ Ա Ն - Բ Ժ Ժ Կ Ա Կ Ա Ն

ՀԱՅ ԲԺԺԿԱՆ ԶԵՆՈՒԹԻՒՆԵՐ, «ՕԳՈՒՅ ԲԺԺԿՈՒԹԵՐՆ»
ԱՄԻՐՏՈՎԼԵԹԻ, ԵՒ ՊՈՒՆԻԼԹ ԲԺԺԿ ՍԵՐԱՍՏԱՅԻ

Առիթ ունեցայ այս օրերս աչքէ անցընելու Պալաթի Ս. Հրեշտակապետ եկեղեցւոյն մատենադարանին բժշկարանը, որ իւր կարեւոր յիշատակարանովն հայ բժշկական պատմութեան նոր էջեր ընծայող ձեռագիր մ'ըլլալով, պարտք կը համարիմ՝ հակիրճ տեղեկութեամբ ծանօթացընել զայն։

Բժշկարանս է Ամիրտովլաթ անուանի հայ բժշկին «Օգուց բժշկութեան» կոչուած հանրաժանութեան երկասիրութիւնը, զոր վերստին շարագրած է կամ դասաւորած՝ Պունիաթ Սերաստացի։

Յայտնի չէ թէ երբ, ո՛ւր եւ որո՞ւ ձեռքով օրինակուած է գրչագիրս, որուն առաջին էջին ձակատը դրոշմուած է կլորակ փոքրիկ կնիք մը՝ վրան «սուրբ հրեշտակապետ եկեղեցւոյ» գրուած եւ անընթեռնի թուական մը, վարը ուրիշ կնիք մը ձուածել, որ կը կրէ «Թաղական խորհուրդ Պալատու» խօսքը, մէջտեղն ալ «1860» թուականը։